# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» փետրվարի 2020թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեականի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ)

**1. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների մասին.**

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

---

**2. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի, «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**4. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի, «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

5. **Մասնակիցների առաջարկած գները՝**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *1* | ***Բենզին ռեգուլյար*** | 11 263 600 | 2 252 720 | 13 516 320 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) «ՖԼԵՇ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *1* | ***Բենզին ռեգուլյար*** | 11 295 966.7 | 2 259 193.3 | 13 555 160 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *1* | ***Բենզին ռեգուլյար*** | 11 328 333.33 | 2 265 666.67 | 13 594 000 |

**6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացրած հայտի կազմման՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին.**

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի, «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**7. Տեղեկություններ՝ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի վերաբերյալ.**

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի, «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված համապատասխան ապրանքի նկարագրին, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

**9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.**

Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց. ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ -ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Գնահատող անձնաժողովը որոշեց՝**
-հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
-գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Արման Ղուկասյան

Էդգար Տոնականյան

Գրիգոր Գաբրիելյան

Հովհաննես Ստեփանյան

Քարտուղար՝ Օֆելյա Աստվածատրյան